ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2021թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14[3]-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հ.55/2 հասցեում գտնվող «Ջրառ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.194615հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «ջրային» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի», իսկ Տիգրան Մեծի պողոտայի հ.55/3 հասցեում գտնվող «Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.130476հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «ջրային» հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել կադաստրի կոմիտե և քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հ.55/2 հասցեում գտնվող «Ջրառ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.194615հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «ջրային» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի», իսկ Տիգրան Մեծի պողոտայի հ.55/3 հասցեում գտնվող «Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.130476հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «ջրային» հողերի կատեգորիա։

Տիգրան Մեծի պողոտայի հ.55/2 հասցեում գտնվող 0.194615հա մակերեսով հողամասը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.01.2018թ. հ.26012018-01-0217 /գաղտնաբառ՝ AXLRSFBS6AMI/ վկայականի համաձայն հանդիսանում է «Ջրառ» ՓԲԸ-ի սեփականությունը, իսկ Տիգրան Մեծի պողոտայի հ.55/3 հասցեում գտնվող 0.130476հա մակերեսով հողամասը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.06.2020թ. հ.11062020-01-0164 /գաղտնաբառ՝ W8GAL7DIJJQA/ վկայականի համաձայն՝ «Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հասցեներում գտնվող հողամասերը գտնվում են ջրային մակերևույթների, հասարակական կառուցապատման և անցումային բուֆերային գոտիներում:

«Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում նախատեսվում է գործող օրենսդրության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին ու պայմաններին համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա իրականացնել բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարական աշխատանքներ:

Անշարժ գույքերի փոխանակության 23.06.2020թ. հ.2069 պայմանագրի հիման վրա Երևան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հ.55/2 հասցեում գտնվող «Ջրառ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.194615հա մակերեսով հողամասը փոխանակվել է Տիգրան Մեծի պողոտայի հ.55/3 հասցեում գտնվող «Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.130476հա մակերեսով հողամասի հետ:

Նկատի ունենալով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հասարակական նշանակության շինությունները նախատեսված են բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում, իսկ փոխանակման արդյունքում «Պար Սամ Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերվող Տիգրան Մեծի պողոտայի հ.55/2 հասցեում գտնվող 0.194615հա մակերեսով հողամասը գտնվում է «ջրային» նպատակային նշանակության հողերի կազմում, իսկ «Ջրառ» ՓԲԸ-ին անցնող հողամասը, որպես ջրանցքի զբաղեցրած նախատեսված է «ջրային» նպատակային նշանակության հողերի կազմում անհրաժեշտություն է առաջացել 0.194615հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «ջրային» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել

«բնակավայրերի», իսկ 0.130476հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիայից՝ «ջրային» հողերի կատեգորիա։

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ